

ԲԱՆԱԽՈՍ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10, 1997 թվ.

ԹԻՎ 12

Հ Ի Ն Գ Շ Ա Բ Թ Ի . Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի 4

ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ սոցիալական ապահովության նախարար



Նախ ներկայացնեն սոցիալական ապահովության նախարարության կառույցը: Անցյալ տարի այն ուներ 170 աշխատող, այսօր արդեն 131-ը, իրական մասնագետներ են 100-ը: Համակարգում կա զբաղվածության և աշխատանքի պետական ծառայությունը, որտեղ աշխատողների թիվը 600-ն են, ունենք աշխատանքային փորձաքննության հանձնաժողով՝ 73 աշխատակիցներով: Սոցիալական ծառայությունների կառույցներն ու կենսաթոշակային ապահովության մարմինները հանձնված են կամ մարզերին կամ մեկ այլ կառույցի: Նախարարությանը մնացել է միայն սոցիալական քաղաքականության իրականացումը:

Ո՞րն է այն օրենսդրական հիմքը, որի վրա կառուցվում է սոցիալական ապահովության քաղաքականությունը: Կարելի է բաժանել երեք մասի. առաջինը օրենքներն են՝ Սահմանադրության գլխավորությամբ, որի 33-րդ հոդվածը հայտարարում է սոցիալական ապահովության քաղաքականությունը, ապա գալիս են զբաղվածության, կենսաթոշակային, հաշմանդամության պաշտպանության և կենսաթոշակի մի քանի տարատեսակների մասին օրենքները: Շատ չեն այն օրենքները, որոնք կոչված են սոցիալական ապահովության քաղաքականությունն իրականացնել:

Երկրորդ խումբը վերաբերում է նախագահի հրամանագրերին և կառավարության որոշումներին: Բնականաբար բոլոր օրենքներն ունեն կառավարության ակտերով արտահայտված ենթաօրենսդրական դաշտը, մշակված են այն մեխանիզմները, որոնցով իրականացվում է այդ քաղաքականությունը:

Երրորդ խումբը մշակվող այն ծրագրերն են, որոնցից բխեցվելով մշակվում են և՛ օրենքները, և՛ մնացած փաստաթղթերը: Դրանք ՀՀ-ում սոցիալական ապահովու-

թյան քաղաքականությունն է, որը հաստատված է 1997թ. մարտի 4-ին հանրապետության նախագահի կողմից, կենսաթոշակային ապահովության ռազմավարությունն է՝ հաստատված վարչապետի կողմից: Եվ այս փաստաթղթերը հիմք են տալիս մեր հանրապետությունում տանել սոցիալական ապահովության քաղաքականություն:

Ո՞ւմ համար ենք տանում այդ քաղաքականությունը, ինչպիսի՞ խումբ մարդկանց համար է այդ ամենը իրականացվում:

Հանրապետությունում այսօր մենք հայտարարում ենք (մարդահամարի տվյալներով) 3,6 միլիոն մարդ, որից մեկ միլիոն հարյուր հազարը մինչև 18 տարեկան երեխաներ են, 650 հազարը կենսաթոշակառուներ: Այսինքն՝ հանրապետության բնակչության յուրաքանչյուր վեցերորդը թոշակի տարիքի է: ՈՒնենք 110 հազար հաշմանդամ, 350 հազար փախստական, 42 հազար որբ երեխա (5 հազարը երկկողմանի) և 32 հազար ընտանիք, որոնք ապրում են աղետի գոտում, ժամանակավոր կացարաններում: Ցավոք սրտի, ունենք աղետի գոտի, որի խոշոր քաղաքները՝ Գյումրին, Սպիտակը, դրանց շրջակայքը 10 տարի հետո վերա-

(շարունակությունը էջ 2)

«Շատ չեն այն օրենքները, որոնք կոչված են սոցիալական ապահովության քաղաքականությունն իրականացնել:»



Չրանուշ Չակոբյանը
 ծնվել է 1954 թ. Գեղարքունիքի Սարուխան գյուղում: 1970թ. գերազանցությամբ ավարտել է տեղի թիվ 1 միջ-

նակարգ դպրոցը, 1975-ին՝ ԵՊՀ-ի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: Այստեղ էլ նշանակվել է աշխատանքի սկզբից որպես լաբորանտ, մաթ. ծրագրավորող, 1976-83-ը՝ ասիստենտ: 1978-80թ. աշխատել է նաև համալսարանի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարի տեղակալ, ապա ընտրվել քարտուղար: 1983-ին ընտրվել է ՀԼԿԵՄ կենտկոմի քարտուղար, իսկ 1985թ.՝ առաջին քարտուղար: 1990-ին ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի սոցիալական և առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, իսկ 1991թ.՝ հանձնաժողովի փոխնախագահ: 1995թ. ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր և սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ: 1968-90թթ. եղել է ՀամԼԿԵՄ, 1975-90թթ.՝ ԽՄԿԿ անդամ: 1986-90թթ. ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԳԽ նախագահության անդամ: 1994թ. վերապատրաստվել է Վաշինգտոնի Իրավունքի միջազգային ինստիտուտում: 1994թ. ՀՀ կառավարության որոշմամբ նշանակվել է ՄԱԿ-ի կողմից կազմակերպվող կանոնադրության համաժողովի հայաստանյան ղեկույցը պատրաստող հանձնաժողովի նախագահ: 1986-89 թթ. գերազանցությամբ ավարտել է Մոսկվայի հասարակական գիտությունների ակադեմիան, 1994-ին՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 1996թ. նոյեմբերին նշանակվել է ՀՀ սոցիալական ապահովության նախարար:

կանգնված է ընդամենը 20%: Սիա այսպիսի ժողովրդագրական պատկերի վրա է կառուցվում մեր քաղաքականությունը:

Վերջինիս չորս տեսանկյունները կփորձեն ներկայացնել, ինչպես նաև տալ այն իրավիճակը, որն առկա էր մինչև Հայաստանի անկախության հռչակումը:

Պլանային տնտեսության պայմաններում բավականին պլանավորված էին մարդկանց սոցիալական պաշտպանության հիմնահարցերը: Անցումային շրջանում, երբ մեր երկիրը, պետությունը որդեգրեց ժողովրդավարություն, շուկայական տնտեսություն հաստատելու, իրավական պետություն կառուցելու ամենաբարձր և կարևոր խնդիրները, այս հարցերն ամրագրեց Սահմանադրության առաջին հոդվածում և չորրորդ գլխավոր հիմնահարցը համարեց սոցիալականը. կառուցվող պետությունը պետք է լինի նաև սոցիալական: Անցումային փուլում երեք կարևոր խնդիր պետք է, որ կարողանա պետությունը լուծել՝ աղքատության կրճատումը, մարդկային ներուժի պահպանումը և նրա հարմարեցումը շուկայական տնտեսության կրճատումը: Այս հարցերի իրականացումով է հնարավոր մեղմել այն սոցիալական բևեռացումը, որը, ցավոք, գնալով խորանում է և օգնել մարդկանց կենսամակարդակի բարձրացմանը:

Կառավարության համակարգում, մեր նախարարությունում, գտնում ենք, որ առաջին և գլխավորը զբաղվածության, աշխատանքով ապահովման հարցն է: Քննարկման փուլում է 1998թ. պետական բյուջեի նախագիծը, և, ի ուրախություն մեզ, առանձին տողով նշված է այն 1,5 միլիարդ դրամը, որը նախատեսվում է աշխատատեղեր ստեղծելու համար: Ինքս մասնակից եմ եղել մեր երկրում տասներկու պետական բյուջեների քննարկմանը, և ընդգծեմ, որ վերջին յոթ տարիների ընթացքում առաջին անգամ այսպիսի գումարներ է նախատեսվում տնտեսության որոշակի ճյուղերի, ձեռնարկությունների ֆինանսական առողջացման, շուկայի պայմաններում նրանց վիճակի բարելավման համար: Նաև դոնոր երկրները, միջազգային մի շարք կազմակերպություններ ցանկություն են հայտնել շուրջ ութ միլիարդ դրամի չափով ներդրումներ կատարել հանրապետությունում: Եվ եթե, իրոք, 1998 թվականին օտարերկրյա ներդրումների համար համապատասխան իրավական դաշտի պայմաններում մենք կարողանանք նման ներդրումներ ստանալ, ապա աշխատատեղերի ապահովման խնդիրը հանրապետությունում որոշակի տոկոս կկազմի:

Մեր ծառայությունների միջոցով վերլուծվում է աշխատաշուկան, դրա կազմն ու կառուցվածքը, փորձ է արվում հնարավորին սահմաններում, տնտեսության դանդաղ, դժվար, բայց փոփոխվող պայմաններում մարդկային ներուժը համապատասխանեցնել զարգացող տնտեսության պահանջներին: Եթե մինչև 1997 թվականը մեր ծառայությունները վարում էին պասիվ զբաղվածության քաղաքականություն, ընդամենը հաշվառում էին գործազուրկներին և նպաստ տալիս, ապա 97թ.

(շարունակությունը՝ էջ 3)

ընթացքում այն կարող են գնահատել ակտիվ, բայց ոչ վերջնական և որակյալ քաղաքականություն: Այսօր մեր նախարարությունը համապատասխան հիմնարկ-ծեռնարկությունների, գործատուների հետ մշակում է ծրագրեր, որոնք ուղղված են գործազուրկների վերաորակավորմանը: Ստեղծել ենք մի ինստիտուտ, որի օգնությամբ ինքնուրույն աշխատանք ունենալու ցանկությամբ մարդկանց համար ոչ միայն ծրագրեր են կազմվում, այլև համապատասխան միջոցներ են հատկացվում գործ սկսելու համար:

Փախստականների հանձնակատարի գրասենյակի հետ մշակել ենք ծրագրեր փախստականների համար: Մի խումբ կանաց համար և՛ ուսուցում է կազմակերպվել, և՛ աշխատանքի հնարավորություն ստեղծվել: Գտնում են, որ աշխատանքի շուկայում հատկապես անընդունակ քաղաքացիները պետք է գտնվեն զբաղվածության և աշխատանքի ծառայությունների առաջնային տեսադաշտում: Կանանց, երիտասարդության, հաշմանդամների զբաղվածության հիմնահարցերը պետք է լինեն առաջնայինը՝ տարվող քաղաքականության հիմքում: Դրան պետք է ավելանան փախստականները, խմբային առումով դժվարին վիճակում գտնվող այն մարդիկ, որոնք այս պահին անհրաժեշտություն են զգում օգնության և աշխատանքի տեղավորման:

Այսօր հանրապետությունում արձանագրված է 172 հազար գործազուրկ, որից 115 հազարը կանայք են, 17% ունի բարձրագույն կրթություն: Իհարկե, ունենք և՛ թաքնված գործազրկություն, և՛ թաքնված զբաղվածություն: Դժվար է ասել դրանք ինչ տոկոս են կազմում: Կարծում են, դրանք ուղիղ համեմատական կապի մեջ են ստվերային տնտեսության, ինչպես նաև հարկային քաղաքականության բացթողումների հետ: Եթե մենք կարողանանք հարկել բոլոր աշխատանքները, ապա կկարողանանք օրինականացնել նաև այն թաքնված զբաղվածությունը, որը կա մեր հանրապետությունում: Փոխկապակցված հարա-

բերություններ են, և պետք է կարողանանք տարվող և՛ տնտեսական, և՛ հարկային, և՛ սոցիալական հետևողական քաղաքականության արդյունքում նաև հնարավորին չափ օրինականացնենք այն գործընթացները, որոնք կան երկրում:

Մենք կառավարության վերջին որոշումներով աշխատանքի և զբաղվածության ծառայությանը ավելացրեցինք նաև աշխատանքի ֆունկցիան, և աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորումը, կարծում ենք, պետք է դառնա մեր նախարարության գլխավոր հիմնախնդիրներից մեկը: Ցավոք, այստեղ օրենսդրությունը խիստ կարող է, աշխատանքային օրենսգիրքը ամբողջությամբ պլանային տնտեսությանը համապատասխան է, արդեն սեփականաշնորհված ձեռնարկատերերի հետ իրավական հարաբերությունների կարգավորումը

«Հանրապետության բնակչության յուրաքանչյուր վեցերորդը թոշակի տարիքի է:»

գրեթե լուծված չէ: Այստեղ մեզ հատկապես խիստ անհանգստացնում է երեխաների աշխատուժի շահագործումը, ճիշտ օգտագործումը, անհատական, կոլեկտիվ պայմանագրերի բացակայությունը, աշխատանքի անվտանգության, հիգիենայի, պայմանների համապատասխանեցումը սովորական, մարդու իրավունքին համապատասխան աշխատանքային պայմաններին: Ցավոք, մենք ունենք շեղումներ, բացթողումներ և այս ուղղությամբ պետք է և՛ արշավ սկսել, և՛ օրենսդրորեն կարգավորել այս հարաբերությունները:

Սոցիալական քաղաքականության հաջորդ բնագավառը մենք վերագրում ենք կենսաթոշակային ապահովությանը: Հանրապետությունում տարեցների թիվը գնալով ավելանում է: 650 հազար թոշակառուների առկայության պայմաններում քաղաքականությունը պետք է լինի շատ հստակ, որոշակի: Պետք է ասեն, որ վերջին յոթ տարիների ընթացքում երկու օրենք է ընդունվել

կենսաթոշակային ապահովության վերաբերյալ: Առաջինը գրեթե շարունակել է 1958թ. ընդունված խորհրդային պետության օրենքը, իսկ 1996թ. հունվարի մեկից գործողության մեջ մտած օրենքով փորձ արվեց շուկայական տնտեսության պայմաններում կարգավորել կենսաթոշակային հարաբերությունները: Ցավոք, հիմքում չդնելով մարդու աշխատանքը, նրա կողմից կատարած վճարումները, այսօր մենք, անկախ ավանդից, վաստակից, աշխատանքից հավասար մոտեցում ենք ցուցաբերում աշխատած կամ գրեթե ոչինչ չարած մարդկանց նկատմամբ: Այսօր միջին կենսաթոշակը կազմում է 3600, նվազագույնը՝ 2200 դրամ: Չնայած 97 թվականին փորձ արեցինք նոր հաշվարկման մեխանիզմ մտցնել՝ երկու անգամ հունվարի մեկին և հոկտեմբերի մեկին, բարձրացնելով կենսաթոշակները, ձգտելով տարեցներին, ավելի շատ ստած ունեցող մարդկանց ավելի շատ կենսաթոշակ տալ քան նրանց, որոնք ավելի քիչ են աշխատել կամ գրեթե չեն աշխատել: Իհարկե, այս տարբերակումը մտցնելը չի նշանակում, որ մենք լուծեցինք կենսաթոշակային ապահովության գլխավոր հիմնահարցերը: Այդ իսկ պատճառով նախարարությունում մշակվեց կենսաթոշակային ապահովության ռազմավարությունը: Գտնում ենք, որ կենսաթոշակային ապահովությունը մեր երկրում առաջիկա տարիներին պետք է կազմված լինի երեք սյունից: Առաջինը պետական կենսաթոշակներն են. պետք է ճշգրտվի, թե այս երկրում ով պետք է ստանա պետական կենսաթոշակ: Մենք առաջարկում ենք, որ դրանք պետք է լինեն պետական չինովնիկները և թոշակի անցնող զինծառայողները: Սա կկոչվի պետական կենսաթոշակային ապահովություն: Երկրորդ սյունը պարտադիր կենսաթոշակային ապահովությունն է: Սրա տակ մենք նկատի ունենք, որ բոլոր աշխատող մարդիկ պետք է կատարեն պարտադիր ապահովագրական վճարներ, ունենան իրենց հաշվի համարը, կողը: Վերջինիս վրա պետք է

(շարունակությունը էջ 4)

կուտակվեն նրանց ունեցած ամբողջ տարիների վաստակի այն տոկոսը, որը կսահմանի օրենքը, և այնուհետև որոշակի տարիքում, պայմաններում, որոշակի տոկոսով քաղաքացին ետ է ստանում այդ գումարը կենսաթոշակի կարգով: Դրա համար առկա այն գաղափարախոսությունից, թե երիտասարդները աշխատում են, որպեսզի ծերերին պահեն, սերունդների այս համերաշխությունից մենք պետք է անցում կատարենք կուտակման սկզբունքին: Յուրաքանչյուր քաղաքացի կիմանա, թե ինքը, իր գործատուն ինչպես է ապահովագրում իր ծերությունը:

Սրան զուգահեռ, մենք պետք է թույլ տանք և զարգացնենք ոչ պետական կենսաթոշակային ապահովագրությունը: Բնակչության մեջ կա անվստահության տարր, հատկապես չկայացած բանկիրների գործունեության պատճառով, որոնք մարդկանց գումարները հափշտակելով անհետացան կամ այսօր դատական քաջբռնկների մեջ են: Այդ պատճառով կամավոր ապահովագրության հիմնահարցը պետությունը պետք է շատ խիստ կերպով երաշխավորի, դառնա երաշխավոր, որպեսզի մարդիկ վստահ լինեն և կամավոր կերպով փորձեն իրենց ծերությունը լրացուցիչ ապահովագրել:

Իհարկե, այս խնդրի գլխավոր հարցը սոցիալական ապահովագրության համակարգի ներդրում է մեր հանրապետությունում: Մենք գտնում ենք, որ բնակչությանը պետք է սոցիալական ապահովագրության չորս գլխավոր ուղղություն: Առաջինը՝ ծերության ապահովագրությունն է, ապա՝ գործազրկության, դժբախտ դեպքերից և հիվանդություններից ապահովագրությունները: Եթե այս ապահովագրության համակարգը կարողանանք ներդնել հանրապետությունում, կարծում են, որ սոցիալական ապահովագրության գլխավոր խնդիրը այս փուլի համար մենք լուծած կլինենք: Կատարման առումով սրա ամենագլխավոր մեխանիզմը այն կողավորման համակարգի ներդրումն է, որը կա ԱՄՆ-ում, շատ առաջավոր երկրներում, և մեր մասնագետները այսօր ուսումնասիրում են այդ փորձը: Այստեղ ձեռնպահ կմ-

նան թվարկելուց այն օրենքների փաթեթը, որն անհրաժեշտ է նման ռազմավարությունը իրականացնելու համար:

Սոցիալական ապահովության ամենաբարդ ուղղություններից մեկը փախստականների և բնակչության տեղաշարժի հիմնահարցն է: Վերը նշեցի, որ ունենք 350 հազար փախստական, որոնք բնակչության մյուս հատվածի նման գտնվում են միգրացիոն գործընթացի մեջ:

Ըստ պաշտոնական տվյալների, հանրապետությունից դուրս է եկել շուրջ 400 հազար մարդ: Կան, սակայն, տարբեր գնահատականներ: Պատճառներ շատ կարելի է նշել, կթվարկեն դրանցից երեքը: Առաջինն այն մարդիկ էին, որոնք, իրոք, խորհրդային ռեժիմին դեմ էին, չէին ուզում ապրել այն երկրում, որը կոչվում էր սովետական պետություն

«Եթե մենք կարողանանք հարկել բոլոր աշխատանքները, ապա կկարողանանք օրինականացնել նաև այն թաքնված զբաղվածությունը, որը կա մեր հանրապետությունում:»

և ռեժիմի պատճառով չէին կարողանում մեկնել: Այդ իսկ պատճառով 1991թ., անկախության հռչակումից անմիջապես հետո վարագույրը բացվեց, և նրանք մեկնեցին: Երկրորդ խումբը այն մարդիկ էին, որոնք Չայաստանից հեռացել են 1992-94թթ.: Չայտնի տնտեսական բարդությունները, էներգետիկ ճգնաժամը, շրջափակումները ստեղծեցին մի այնպիսի վիճակ, երբ եղան մարդիկ, որոնք չկարողացան նման պայմաններում գոյատևել և նույնպես թողեցին Չայաստանը: Երրորդ խումբը այն երիտասարդներն էին, որոնք խուսափեցին բանակից և Եվրոպայի ու աշխարհի տարբեր երկրներում այսօր որպես գաղթական շրջում են. քչերին է հաջողվել գտնել իրենց տեղը այդ երկրներում, և այսօր նկատվում է հակառակ գործընթացը՝ վերադարձ դեպի հայրենիք:

Փախստականների հետ տարվող աշխատանքը շատ ակնհայտ և բացահայտ է: Երկու գլխա-

վոր հիմնահարց պետք է լուծվի նրանց համար և լուծվում է: Նման փոքրիկ, դեֆիցիտային բյուջեի պայմաններում դժվար է ասել, թե հիմնախնդիրները միանգամից կլուծվեն: Բայց ժնկյան պակտի համաձայն, մեր երկիրում այսքան բարդություններ ունենալով հանդերձ, այսօր չեք գտնի մի փախստական, որն իր գլխի վրա ծածկ չունի: Այլ խնդիր է, թե դրանք ինչքանով են բարեկարգ, ինչքանով են ապահովված նրանց կոմունալ կենցաղային հարմարությունները: ՄԱԿ-ի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ երկու-երեք տարի է իրականացնում ենք ծրագրեր: Շուրջ 1200 բնակարան է կառուցվել փախստականների համար, շինարարական աշխատանքները շարունակվում են: Գերմանիայի կառավարությունը որոշակի թաղամասեր, գյուղեր է կառուցել նրանց համար: Եվրախորհուրդը, ամերիկյան կառավարությունը, Յուլանդիան, Նորվեգիան, այլ երկրներ իրենց մասնակցությունն են բերում փախստականների հիմնահարցերը լուծելուն:

Երկրորդ ուղղությունը փախստականներին աշխատանքի տեղավորման հարցերն են: Զբաղվածությունը կարգավորելու ծրագրերը կազմելիս առանձնացվում են նաև փախստականների հիմնախնդիրները:

1998 թվականին մեր քաղաքականության հիմքում դնելու ենք միգրացիայի պետական ծառայություն ստեղծելու հարցը: Կարծում ենք, որ այնպիսի երկրի համար, ինչպիսին Չայաստանն է, երբ մեր ազգի շուրջ 70% այսօր հանրապետությունից դուրս է գտնվում, իրոք, պետք է միգրացիոն ծառայություն ունենաք, որի մասնաճյուղերը պետք է լինեն ոչ միայն Չայաստանի, այլև աշխարհի հայաշատ վայրերում:

Չորրորդ ուղղությունը սոցիալական աջակցության հիմնահարցերն են: Չուտ պետությունների թվերով ասած, սոցիալական աջակցությունը 1997թ. իրականացվում է երկու խոշոր ծրագրով: Առաջինը՝ երեխաներին

(շարունակությունը էջ 5)

տրվող նպաստներն են՝ 8,5 միլիարդ դրամի չափով: Շուրջ 300 հազար երեխա, միայնակ մայր ստանում են այդ նպաստները: 2,6 միլիարդ դրամի չափով տարիներ շարունակ մարդկանց տված արտոնությունները փոխարինվեցին փոխհատուցումներով: Նախատեսվում է այս ծրագիրը 1998 թ. դարձնել մեկ միասնական ծրագիր՝ «Ընտանեկան նպաստ» անվանումով: Վերջինիս հիմքում դրվում է «Փարոս» համակարգը, որը հանրապետությունում սկսել է գործել 1994 թ.: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հովանավորությամբ: Այն, փաստորեն, ընտանիքների կարիքավորության աստիճանը որոշող համակարգ է: Վերջինս մենք որոշակիորեն մաքրել և փաստագրել ենք: Այժմ փաստաթղթերով, հիմնավորումներով ճշգրտում ենք այն բոլոր հայտարարությունները, որոնք արված և գրանցված են: Դրանցից կառանձնացնեն հինգ կարևորագույն փաստարկ: Առաջին գլխավոր փաստարկը ընտանիքում եղած սոցիալական ռիսկի խումբն է: Երկրորդը անաշխատունակ անդամների թիվն է: Հաջորդը այն բնակարանի մեծությունն է, որտեղ ապրում է ընտանիքը, չորրորդը ընտանիքի եկամուտն է, հինգերորդը՝ աշխարհագրական տեղն է, որտեղ ապրում է այդ ընտանիքը: Այս չափանիշները դրվում են ճշգրտելու ընտանիքի կարիքավորության աստիճանը, բալավորվում է: Կառավարությունը կնշի այն սահմանը, որից վերև ընտանիքները կստանան նպաստ:

Երկրորդը հաշմանդամության ծրագիրն է: Խնդիր ենք դրել, որ հանրապետությունում հաշմանդամները ապահովվեն բոլոր կարգի անհրաժեշտ պարագաներով: Այսօր փորձ է արվում մեր ոչ հզոր բազայի վրա արտադրել նման պարագաներ: Հաշմանդամների հետ կապված հաջորդ խնդիրը ոչ միան հաշմանդամության կանխարգելման, բուժման, վերականգնման հիմնահարցերն են, այլ նրանց հասարակության մեջ ինտեգրման խնդիրը, որը համարում ենք հարցերի հարցը: Վարչապետի որոշմամբ ստեղծված է հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող պետական հանձնաժողով, որի կազմում կան հինգ նախարար: Կարծում են, սա արդեն վերաբերմունք է նշանակում հաշմանդամների հիմնահարցերի նկատմամբ:

Առանձին մշակում և ՄԱԿ-ի գրասենյակի հետ իրականացնում ենք գենդերային զարգացման ծրագիր: Փորձ է արվում կանանց և տղամարդկանց իրավունքների համահարթեցման, հավասարեցման խնդիրը կարգավորել մեր երկրում: Պետք է ասեն, որ օրենսդրական առումով մենք նման խնդիր չունենք. իրավական ոչ մի ակտում չենք գտնի, որ կինը ստորադասված է տղամարդուն: Հակառակը, մենք ունենք օրենսդրական որոշակի նյութեր, որտեղ մայրությունն ու մանկությունը ավելի պաշտպանված, ավելի արտոնյալ է: Դե յուրե խնդիր չունենք, իսկ դե ֆակտո, մասնավորապես, կանանց մասնակցությունը պետական կառա-

վարման համակարգում դեռևս ցածր է, որոշումների ընդունման հարցում նույնպես: Որպեսզի այդ բացը լրացնենք, մեր նախարարությունը իր բոլոր օրենսդրական գործունեությունը, որոշումները կան օրենքի նախագծերը մշակելիս, դրանք ուղարկում է բոլոր հասարակական, հատկապես կանանց, կազմակերպություններին խնդրելով նրանց կարծիքը, փորձելով հաշվի առնել դրանք: Հանրապետությունում գործող 1400 հասարակական կազմակերպություններից ընտրել ենք շուրջ հարյուրը, դրանցից առանձնացվել է խումբ, որոնց հետ համագործակցելով կողորհնացվում է մյուսների աշխատանքը: Ըստ իս, մեր հասարակական կազմակերպությունների 99% պետք է զբաղվի սոցիալական հարցերով:

Վարչապետի հրամանով վեց հանձնաժողովի նախագահ են, որոնցում ընդգրկված են նաև հասարակական, այդ թվում կանանց կազմակերպություններ: Այդ ճանապարհով փորձում ենք իրականացնել նաև սոցիալական քաղաքականությունը, հաշվի առնել բնակչության, հասարակական կազմակերպությունների կարծիքը, այն բյուրեղացնել, դարձնել իրավական նորմ, կառավարության որոշում, այս կամ այն օրենքի պոստուլատ, այնուհետև կիրառել ժողովրդի համար որպես օրենք: Այսպես մենք կարող ենք դառնալ իրավական պետություն, օրենքը գերակայել ամեն ինչից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

-Դժվար չէ՞ լինել կին նախարար, այն էլ՝ սոցիալական ապահովության նախարար:

-Անկեղծ ասած, չեմ ուզում, որ աշխատանքի մեջ սեռը որևէ նշանակություն ունենա: Գտնում եմ, որ մարդն ուղղակի պետք է աշխատի, անկախ նրանից, նա կին է, թե տղամարդ, ունենա պատասխանատվություն, պարտքի զգացում:

-Հայաստանի աշխատավոր բնակչության քանի՞ տոկոսն է նվազագույն աշխատավարձ ստանում, և որքա՞ն է այն կազմում այժմ: Քանի՞ տոկոսն է միջին աշխատավարձ ստանում և որքա՞ն է գնահատվում այն: Քանի՞ տոկոսն է բարձր աշխատավարձ ստանում:

-Հանրապետությունում աշխատունակ բնակչությունը կազմում է մեկ միլիոն 500 հազար մարդ: Սեփականաշնորհման գործընթացում, իհարկե, տեղի է ունենում գործազրկության աճ, և պետական սեկտորը կամաց-կամաց իր տեղը զիջում է մասնավորին: Այսօր ամենացածր աշխատավարձը ստանում են բյուջետային աշխատողները՝ ուսուցիչներ, բժիշկներ և այլն: Նրանք ստանում են 4000-5000 դրամ աշխատավարձ: Հանրապետությունում նվազագույն աշխատավարձը սահմանված է 1000 դրամ: Միջին աշխատավարձը տարբեր ճյուղերում տարբեր է, բայց գնահատվում է 12-13 հազար դրամ: Բյուջետային համակարգում աշխատում է 280 հազար մարդ, որոնց 20% պետական

(շարունակությունը էջ 6)

պաշտոնյաներ են, ստանում են 15 հազարից բարձր աշխատավարձ: Ունենք շուրջ 330 հազար գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսական համակարգում զբաղված է շուրջ 550 հազար մարդ: Հանրատնտեսությունում տարբերակվում է հիզ տեսակի հող և կախված կադաստրից գյուղացիների եկամուտները տարբեր են: Ամեն դեպքում, նշված թվով մարդ մեզ մոտ համարվում է զբաղված, որովհետև նրանք սեփականատեր են: Շուրջ 400 հազար մարդ էլ արդյունաբերությամբ, սեփականատիրական գործունեությամբ են զբաղված, անհատ ձեռներեցներ են: Այսինքն, մոտ 70% այսօր համարվում է զբաղված:

-Վերջերս Ձեր պատասխանատվության ոլորտը ընդլայնվեց, ներառելով մարդասիրական հարցերով զբաղվող հանձնաժողովը Հայաստանում: Կարո՞ղ եք մեկնաբանել, ինչպե՞ս է Հայաստանի կառավարությունը դիտում տարբեր օտարերկրյա կառույցների մարդասիրական օգնությունը հայ ընտանիքներին:


-Իհարկե, շատ գոհունակությամբ և շնորհակալությամբ: Այդ օգնությունը հանրապետություն սկսել է գալ 1988 թ. երկրաշարժից հետո: Այնուհետև այն շարունակվեց, գիտակցելով, որ նորանկախ երկրին օգնություն է պետք: Եթե 1992, 93, 94 թվականներին նավթի բաշխումը փրկություն էր շատ ու շատ ընտանիքների համար, ապա գնալով վիճակը կայունացնում է, և Հայաստանի կառավարությունը միջազգային կազմակերպությունների, դոնորների հետ իր հարաբերությունները ճշգրտելիս փորձում է մարդասիրական օգնության ծրագրերից անցում կատարել զարգացման ծրագրերի: Մենք գտնում ենք, որ ամենակարևորն ու ամենաճիշտը այս ուղղություններն են: Զարգացման ծրագրերով պետք է կարողանանք մեր մարդկանց աշխատանքի խնդիրները լուծել:

ճիշտ հարկային և մաքսային քաղաքականություն տանել ու սոցիալապես անպաշտպան ու անկարող մարդկանց կարողանանք պաշտպանել պետականորեն:

Չնայած կրճատվում է, սակայն մարդասիրական օգնությունը 1998-ին նույնպես կշարունակվի: Մենք հստակություն պարզություն և գնալով ավելի շատ կարգ ու կանոն պետք է մտցնենք այս հարցերում:

-Սոցիալական ապահովության նախարարությունը ի՞նչ չափով կարող է օգնել այն 200 հազար ընտանիքներին, որոնք ընդգրկված են «Փարոս» համակարգում: Նախարարությունը կարո՞ղ է այնպիսի միջոցներ հատկացնել, որ փակվի, ասենք, էլեկտրակառուցման կամ քեռուցման ծախսերը, էլ չենք խոսում հացի մասին:

-Այս դեպքում ես կասեմ ոչ միայն նախարարության, այլև մարդասիրական հանձնաժողովի ծրագրերի մասին: 200 հազար ընտանիքի ԱՄՆ-ից ստացած մարդասիրական զագից գոյացած գումարների հաշվին՝ 3 մլն դոլարի չափ, ամեն ամիս 2500 դրամ կտրվի որպես էլեկտրաէներգիայի վարձ: «Փարոսի» կամ ամերիկյան կառավարության օգնությամբ 31,5 հազար ընտանիք ստանում են 160լ նավթ՝ ձմռան համար: Դրանք այն ընտանիքներն են, որոնք ապրում են տնակներում: Հանրապետության բոլոր դպրոցները՝ 1432, ստանալու են նավթ՝ յուրաքանչյուր դասարանի համար 3,5լ օրական, եթե երկիրը է՝ 2,5լ և: Վերջապես, հանրապետությունում 110 հազար ընտանիք ստանում է մարդասիրական օգնություն՝ ՄԱԿ-ի պարենի ծրագրի շրջանակներում: Սոցալ նախարարությունը այսօր փորձում է ճշգրտել, «Փարոս» ծրագրում ընդգրկված այն 200 հազար ընտանիքներին, որոնց կտրվի միջինը 6000 դրամ ընտանեկան նպաստ:



1998

Հայաստանի ամերիկյան համալսարանի
հատուկ դասընթացների բաժինը

շնորհավորում է բոլորի ամանորը և

սուրբ ծնունդը,

ցանկանալով խաղաղություն, առողջություն և

նրազանքների իրականացում



ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Ծրագրի ղեկավար՝
Վարդան Օսկանյան
Տեղեկագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58
տպաքանակ՝ 99